ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 1
N ՇՀԱՊՁԲ-7/40-5 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան **29.09.2014թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «ՀԻԴԱԼԳՈ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Է. Մարտիրոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Վաճառող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 18.07.2014թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/40-5 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 9.2 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

1. Փոփոխության առարկան

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել փոփոխություն և *«էլեկտրոնային կշեռքներ և պարագաներ (Սեղանի կշեռք էլեկտրոնային 32 կգ)»* ապրանքատեսակի քանակն ավելացնել 42 հատով՝ դրանց մատակարարման ժամկետ սահմանելով 2014թ. 4-րդ եռամսյակը: Սույն փոփոխությամբ նախատեսված Ապրանքի միավորի գինը մնում է անփոփոխ և կազմում է 60 800 դրամ: Սույն փոփոխության արդյունքում Պայմանագրի գինը ավելանում է 2 553 600 դրամով և կազմում է 20 793 600 (քսան միլիոն յոթ հարյուր իննսուներեք հազար վեց հարյուր) դրամ: Վճարումը կիրականցվի պայմանագրով նախատեսված կարգով, 2014թ 4-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ, քան 25.12.2014թ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքի հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՀԻԴԱԼԳՈ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, Ն. Ավետիսյան 11
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 163028035067
ՀՎՀՀ 00882415	ՀՎՀՀ 03315823
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-ՆՏԱ դեպարտամենտի պետ	տնօրեն
Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ	Է. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40» ծածկագրով ՇՀ ընթացակարգի արդյունքում 2014թ-ի հուլիսի 18-ին կնքված N ՇՀԱՊՁԲ-7/40-5 ծածկագրով պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2014թ-ի սեպտեմբերի 29-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պատվիրատուի մոտ առաջացել է «Էլեկտրոնային կշեռքներ և պարագաներ (Սեղանի կշեռք էլեկտրոնային 32 կգ)» ապրանքատեսակի լրացուցիչ քանակների ձեռքբերման անհրաժեշտություն:

Փոփոխության նկարագրություն: Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել փոփոխություն և «Էլեկտրոնային կշեռքներ և պարագաներ (Սեղանի կշեռք էլեկտրոնային 32 կգ)» ապրանքատեսակի քանակն ավելացնել 42 հատով՝ դրանց մատակարարման ժամկետ սահմանելով 2014թ. 4-րդ եռամսյակը: Սույն փոփոխությամբ նախատեսված Ապրանքի միավորի գինը մնում է անփոփոխ և կազմում է 60 800 դրամ: Սույն փոփոխության արդյունքում Պայմանագրի գինը ավելանում է 2 553 600 դրամով և կազմում է 20 793 600 (քսան միլիոն յոթ հարյուր իննսուներեք հազար վեց հարյուր) դրամ: Վճարումը կիրականցվի պայմանագրով նախատեսված կարգով, 2014թ 4-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ, քան 25.12.2014թ:

Փոփոխության հիմնավորում: Սույն փոփոխություն կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 9.2 կետը: Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշման 71-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին: Պայմանագրում նման փոփոխություն կատարվում է առաջին անգամ և ավելացվող քանակները չեն գերազանցում Պայմանագրի գնի 20 տոկոսը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ՏՎ և ԳՓՁ վարչության գլխավոր մասնագետ Ռ. Մարդոյանին:

Հեռախոս՝ 010-29-44-99:

Էլ. փոստ՝ r.mardoyan@mil.am:

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն: